

ըլլալով՝ եկեղեցական արարողութիւնները սպիտակ մոմով կը կատարէր. Շահաբաս լսած ըլլալով այս պարագան Մովսէս վրդը յատկապէս իր ներկայութեան կը հրաւիրէ, և կը յայտնէ իր հիացումը և կը փափաքի որ իր մարդոց ալ սովորեցնէ նոյն արհեստը. Մովսէս վրդ. կ'ընդունի և կը կատարէ Շահին փափաքը. մանրամասնութիւնները տեսնել (Դարսևաղցի, էջ 292-296): Ժողովուրդը Մովսէս վրդի գործունէութիւնը լսելով 1629 ին կ'ընտրէ Կթղ. ամենայն Հայոց. երեք տարի կը վարէ արդիւնաւոր հայրապետութիւն մը եւ կը վախճանի 1632 ին Երեւանի մէջ եւ կը թաղուի Կոզեռն վարդապետին գերեզմանին մօտ. հետեւեալը իր տապանազերին է զոր յօրինած է Փիլիպպոս կթղ. Ազբակեցին:

«Այս է տապան դամբարանի

Եղեալ շիրմի ճանապարհի

Տեառն Մովսէսի վարդապետի.

Ընտրեալ Ս. Հայրապետ, որ է տեղեալն Տաթևացի,

Նորոգող Ս. էջմիածնի.

Բացող և շինող գմբէթի թուին ՌԶԲ»:

(Արարս, 1902, էջ 446)

Իր գործունէութեան մանրամասնութիւնները տեսնել նաև (Դարսրիձեցի, էջ 284-313): Ս. Յակոբի վանքի առած իր նուէրները տեսնել (ՄԶ. Թ. 532):

ՄՈՎՍԷՍ ՊԵ. — (1109-1133). (Յպե. էջ 37):

ՄՈՎՍԷՍ ՎՐԴ. ԱԺՏԷՐԻՍԱՆՑԻ. — Որդի Կոստանդինի, Ծ. Աթաբեքսանի մէջ. Մր. Ժամասաց. Նւ. Կարնոյ և Ռուսաստանի (1765—1773). Նւ. Ռուսելիի 1780 ին. (Դիւան, Գիրք Գ. էջ 111): Հաւանաբար Ս. Յակոբի մէջ 1777 ին ընդօրինակած է իր Բարոզգիրքը (ՄԶ. Թ. 214):

ՄՈՎՍԷՍ ՎՐԴ. ՄՈՎԱՑԻ. — Ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը Պարոնտէր Գրիգոր պարքի օրով. և նպաստով մը կը մտանակցի վանքին պարտքերու վճարման:

ՄՈՎՍԷՍ ՎՐԴ. ՆՈՒՐԻԿԵԱՆ, ԽԱՐԲԵՐԳՑԻ. — Մբ. Զա. 1884 ին. ՏՓ. (1887-1890). կը վախճանի 1891 ին: Յիշատակ կը թողու երկու մթերանոցներ, մին՝ Յոպպէի (շին. 1887) և միւսն՝ Երուսաղէմի մէջ (շին. 1890):